Ազգ
Azg
13 ՅՈՒԼԻՍ 2013 ՇԱԲԱԹ 119(5202)
ISSN: 1829-1651

# Թուրք-ադրբեջանական զորավարժություններ Բաքվում եւ Նախիջեւանում

**Երեկ ադրբեջանական լրատվամիջոցները, հղում անելով Թուրքիայի կառավարական պաշտոնաթերթին, տեղեկացրին, որ Աբդուլլա Գյուլը «վավերացրել է թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժություններ անցկացնելու մասին հուլիսի 4-ին կողմերի միջեւ ստորագրված միջգերատեսչական համաձայնագիրը», որով նախատեսվում է տարեկան անցկացնել երկու համատեղ զորավարժություն՝ համապատասխանաբար Թուրքիայում եւ Ադրբեջանում:**

**Ըստ ադրբեջանական կողմի մեկնաբանությունների՝ Գյուլն այդ համաձայնագիրը վավերացրել է «օգոստոսի 16-17-ին Բաքու կատարելիք այցի նախաշեմին»:**

*Տես էջ 4*

**ՕՐԵՐԻ ՀԵՏ**

# Ինչ են անում մեր ապահովագրական ընկերությունները

Միշտ զարմացել եմ՝ մեր ապահովագրական ընկերությունները չե՞ն ուզում գումար խնայել-շահել, թե՞ այնքան են վաստակում, որ հղփացել են արդեն: Անկեղծորեն, այլ բացատրություն չեմ գտնում: Ապահովագրական զարգացած համակարգ ունեցող երկրներում այդ ընկերությունները բնական եւ շիրական հակակշիռ են թե՛ պետական գերատեսչությունների, թե՛ քաղաքապետությունների, թե՛ ոստիկանությանը եւ թե՛, բնականաբար, այլ ընկերությունների, եւ դրանով իսկ անհրաժեշտ հավասարակշռություն են ստեղծում երկրների ներսում եւ հասարակության մեջ:

Բացատրեմ միտքս: Հաճախ ենք լսում-կարդում, որ այսինչ երկրում քաղաքացիներից մեկը կամ նրա ժառանգորդները դատի են տվել, օրինակ, ծխախոտ արտադրող այս կամ այն խոշոր ընկերությանը, եւ դատարանի վճռով վերջինս որպես վնասուց հատուցում այնքան գումար է վճարել իր արտադրած ծխախոտի՝ տվյալ անձի առողջությանը պատճառած վնասի դիմաց: Երբեմն այդ հատուցումը հասնում է հարյուրավոր միլիոն դոլարների: Եվ ի՞նչ եք կարծում, տուժող անձը կամ նրա հարազատները կարո՞ղ էին այդ աստղաբաշխական ծախսերը հոգալ, լավագույն, այսինքն՝ ամենահայտնի փաստաբաններ վարձել, քաշքշուկներին դիմանալ: Բնականաբար՝ ոչ: Նրա կամ նրանց փոխարեն ապահովագրական ընկերությունն է ստանձնում այդ ծախսերը, ոչ այնքան տուժող կողմին օգնելու, որքան ծխախոտի տվյալ ընկերությանը «անկյուն կանգնեցնելու», նաեւ իր շահերից բխող օրենսդրական նոր որոշումներ ձեռք բերելու եւ, առաջին հերթին, իր կրած վնասները փոխհատուցելու համար:

Բայց կա ավելին: Ապահովագրական ընկերությունները բնականաբար կարիք ունեն առավել մեծ գումարների, որպեսզի պայքարեն ծխամոլության դեմ՝ ոչ թե եւ ոչ միայն հանուն մարդկանց առողջության, այլեւ սեփական գրպանի: Իրենց պետք են, թերեւս ցինիկ հնչի, առո՛ղջ բաժանորդներ:

Այո, ամեն ինչ հիմնված է շահի վրա, սակայն այս պարագայում այդ շահը շահեկան է բոլորի համար՝ և՛ ընկերության, և՛ հասարակության, և՛ պետության:

Իսկ ի՞նչ պատկեր է մեզ մոտ: Մեղմ ասած՝ տարօրինակ: Բայց ավելի լավ է խոսել սեփական փորձառությունից:

Աշխատանքի գնալիս ես ստիպված եմ անցնել Սարալանջի-Մյասնիկյան-Հերացի փողոցների հատման կետից: Ինժեներա-ճանապարհաշինական մի գլուխգործոց հանգույց, որը պատիժ է դարձել վարորդներիս համար: Գրեթե ամեն օր եթե այդ հատվածում չենք հանդիպում երթեւեկը խափանող ավտովթարի, ապա առնվազն տեսնում ենք մեր հասնելուց առաջ պատահած ավտոմեքենաների «համբուրվելու» հետքերը՝ գետնին թափված ապակու կտորների տեսքով: Եվ դա մեր քաղաքում միակ կետը չէ: Երեւանում բազմաթիվ են վարորդների մղձավանջ դարձած հանգույցները՝ սխալ գծանշումներով, ճանապարհային ոչ հստակ նշաններով ու լուսանշաններով:

Նմանապես լուրջ խնդիր է մգացրած ապակիներով ավտոմեքենաների պարագան: Նույնիսկ տաքսիները հաճախ մգացրած ապակիներով են – ուղեւորը չի՞ տեսնում ի՛նչ եւ ո՛ւմ ավտոմեքենան է նստում... Սովետահայկական մենթալիտետի այդ վառ արտահայտությունը, որը տարիներ առաջ մի քանի պատգամավորներ սուսիկ-փուսիկ «օրինականացրին» Ազգային ժողովում, վթարի իսկական հարուցիչ է, երբ առջեւից ընթացող անթափանց մեքենան փակում է հետեւից եկող մեքենայի վարորդի տեսադաշտը, մինչդեռ վիճակագրությունը հստակ մատնանշում է ավտովթարների գլխավոր պատճառներից մեկը՝ տեսադաշտի խափանում:

Այո, ո՞վ է պայքարելու այս բոլորի դեմ, ո՞վ է կռիվ տալու ոստիկանության համապատասխան ծառայության, քաղաքապետությունների դեմ, ո՞վ է դաստիարակելու եւ վերադաստիարակելու մարդկանց, այս պարագայում՝ վարորդներին: Մի՞թե ապահովագրական ընկերությունները չեն ցանկանում հավելյալ փող աշխատել...

**Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ**

# Վարչապետ-Դաշնակցություն




Առայժմ միայն հայտարարությունների տեսքով կարծես թե հակամարտություն է սկսվում վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ Հայ հեղափոխական դաշնակցության միջեւ: Ավելի շուտ՝ Դաշնակցությունն է հակամարտություն ձեռնարկել վարչապետի դեմ: ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանն օրեր առաջ հայտարարել էր, որ վարչապետը կեղծոս բամբասանքներ է պատվիրում Դաշնակցության մասին եւ տեղեկատվական պատերազմի շրջանակներում պատերազմ հայտարարում կուսակցությանը: Վերջին շրջանում խոսակցություններ էին շրջանառվում, որ Դաշնակցության ներսում լուրջ դժգոհություններ կան, մասնավորապես փորձեր են արվում կուսակցության բյուրոյի ղեկավարի պաշտոնից հեռացնելու Հրանտ Մարգարյանին: Մարգարյանի գնահատմամբ՝ հատկապես ընտրություններից հետո եղել են դժգոհություններ, սակայն այդ խնդիրները հարթվել են ու շրջանառվող խոսակցությունները դրսից գործադրվող ճիգեր են՝ Դաշնակցության մեջ ճեղքեր բացելու համար:

«Դրանց հեղինակը վարչապետն է: Տիգրան Սարգսյանն իր տնտեսական ապիկար գործունեության պատճառով Դաշնակցության կողմից քննադատության ենթարկվելուց հետո բացեիբաց հայտարարել է, որ ինքը պատերազմ է հայտարարում Դաշնակցությանը, եւ այս տեսակ կեղծոս լրատվություն, կեղծոս բամբասանքանման լրատվությունն իր գործն է: Մարդը, որ թույլ է, տկար, այս միջոցներով փորձում է հարցեր լուծել: Ուրիշ ոչինչ չկա՝ մենք ոչ սիրահարված ենք եւ ոչ էլ ատում ենք այդ վարչապետին, բայց ձախողակ վարչապետ է, եւ դրա համար այս մեթոդներն է օգտագործում իր հարցերը կարգավորելու համար», հայտարարել էր Հրանտ Մարգարյանը:

Նման հայտարարությանը բավական մեղմ պատասխան էր հնչել կառավարությունից: «Վարչապետը մեծ հարգանքով է վերաբերվում ավանդական կուսակցություններին, քանի որ դրանք ազգային հարստություն են», հայտարարել են կառավարությունից՝ միաժամանակ զարմանք հայտնելով, որ Դաշնակցությունում նման տեսակետներ կան:

«Բավարարվեք եղածով», երեկ խորհուրդ տվեց ԱԺ ՀՅԴ խմբակցության քարտուղար **Աղվան Վարդանյանը**՝ միաժամանակ չբացառելով, որ ՀՅԴ-ում որոշակի փոփոխություններ կլինեն:

*Տես էջ 2*

# Դեղերը կթանկանան 3-5 տոկոսով

Հայաստանում գազի եւ էլեկտրաէներգիայի թանկացումից հետո կթանկանան նաեւ դեղերը: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց «Լիկվոր» ՓԲԸ տնօրեն **Սերգեյ Մաթեւոսյանը**: «Մեր արտադրանքի վաճառքում նախատեսվում է 3-5 տոկոս նախնական թանկացում: Փորձել ենք հնարավորինս նվազեցնել գնային տարբերությունը», ասաց նա: Ըստ ընկերության տնօրենի՝ «Լիկվորն» այժմ անցնում է միջազգային սերտիֆիկացման փուլ:

«Մենք ապահովում ենք ոլորտի արտադրանքի 37 տոկոսը եւ Հայաստանից դեղերի արտահանման 36 տոկոսը: Այս տարի 2012 թվականի համեմատ 42,2 տոկոս արտահանման աճ է գրանցվել: Արտահանումը իրականացվում է աշխարհի տասը երկիր՝ Վրաստան, Ուզբեկստան, Մոլդովա, Բելառուս, Ղազախստան, Տաջիկստան եւ այլ երկրներ», ասաց Սերգեյ Մաթեւոսյանը:

# «Կյանքի խոսքից»՝ ուղիղ հոգեբուժարան

Վերջերս «Կյանքի խոսք» կոչվող աղանդի՝ Ծաղկաձորում կազմակերպած ժողովից հետո մասնակիցներից մի աղջիկ հոգեկան ծանր վիճակով տեղափոխվել է հոգեբուժարան:

Կատարվածի առնչությամբ «Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության եւ վերականգնողական կենտրոն» ՀԿ-ի նախագահ **Ալեքսանդր Ամարյանը** ասում է, ավելի ճիշտ՝ մեջբերում է շվեդական մի փորձագետի եզրակացությունը, որ խարիզմատիկ եկեղեցու հետեւորդների մեծամասնությունն ի վերջո տեղափոխվում է հոգեբուժարան: Ուստի չի բացառվում, «Կյանքի խոսք» աղանդի պատճառով է մասնակիցը տեղափոխվել հոգեբուժարան:

**Ի. Պ.**

# Եգիպտոսի ափերին մոտենում են ամերիկյան ռազմանավեր

Ամերիկյան երկու ռազմանավ մոտենում է Եգիպտոսի ափերին: Այդ մասին հայտարարել է ԱՄՆ ծովային հետեւակի կորպուսի հրամանատար, գեներալ Ջեյմս Ամոսը:

Նրա տվյալներով՝ Կարմիր ծովի շրջան են մեկնել San Antonio եւ Kearsarge դեսանտային նավերը: Դրանք առայժմ Բահրեյնի ծովափի մոտ մնացող Carter Hall ռազմանավի հետ այս տարվա մայիսից մարտական հերթապահություն են իրականացնում Կարմիր ծովի, Աֆրիկյան եղջյուրի եւ Պարսից ծոցի շրջաններում:

«Եգիպտոսը խրվել է ճգնաժամի մեջ: Երբ նման բաներ են կատարվում, մենք պետք է որոշակի քայլեր ձեռնարկենք իրադրությունը վերահսկելու համար», հայտարարել է Ամոսը, որի խոսքերը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Ծովային հետեւակի կորպուսի ներկայացուցիչները նշում են, որ երբ ռազմանավերը մոտենան ափին, կդյուրանա անհրաժեշտության դեպքում ուղղաթիռների եւ այլ տեխնիկայի կիրառությունը:



ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչը իր հերթին հայտարարել է, որ վերջին օրերին Եգիպտոսում «Մուսուլման եղբայրներ» շարժման ղեկավարների ձերբակալությունները նեհակ են համազգային հաշտեցման խնդիրներին:

# Ջեյմս Թուֆենկյան. «Մարդը պետք է գա Հայաստան եւ զգա, որ Հայաստանում է»

*Երեւանի կենտրոնում բացվեց «Թուֆենկյան ավանդական Երեւան» հյուրանոցը*






Երեւանի կենտրոնում երեկ բացված «Թուֆենկյան ավանդական Երեւան» հյուրանոցը Հայաստանում Ջեյմս Թուֆենկյանի ազգային ճարտարապետական ոճով կառուցած հերթական՝ 4-րդ հյուրանոցային համալիրն էր: 2001-ից «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ընկերությունը նման հյուրանոցներ է կառուցել Սեւանա լճի ափին գտնվող Ծափաթաղ գյուղում, Լոռու մարզում եւ Դիլիջանում: Երեւանում բացված հյուրանոցի նախագծմանը մասնակցել են հայ եւ ամերիկյան հայտնի ճարտարապետներ եւ դիզայներներ, հյուրանոցը կառուցվել է 20-րդ դարասկզբի Երեւանի ճարտարապետական ոճով՝ հիմնականում սեւ տուֆից: Հյուրանոցն ունի 85 համարներ, կոնֆերանսների դահլիճ, կարող է ընդունել 200 զբոսաշրջիկների, մինչեւ 2014-ը կունենա լողավազան, մարզասրահ, գորգերի վաճառքի սրահ:

Խոսելով Հայաստանում իր գործունեության մասին՝ **Ջեյմս Թուֆենկյանը** լրագրողներին ասաց, որ ինքը Հայաստան է եկել անկախությունից հետո՝ նպատակ ունենալով օգնել երկրի տնտեսության զարգացմանը: Ինչ վերաբերում է հյուրանոցների ազգային ճարտարապետական ոճին, ապա նա այն կարծիքը հայտնեց, որ զբոսաշրջիկների համար հետաքրքիր չի լինի, եթե իրենք գան Հայաստան եւ իրենց զգան, ինչպես, ասենք, Լոս Անջելեսում: «Մարդը պետք է գա Հայաստան եւ զգա, որ Հայաստանում է, զգա յուրահատկությունը», նշեց նա: Ըստ Ջեյմս Թուֆենկյանի՝ «Թուֆենկյան ավանդական Երեւան» հյուրանոցում առաջարկվում են 4-5-աստղանի հյուրանոցի ծառայություններ 3-աստղանի հյուրանոցի գներով: Հյուրանոցի հիմնադիրը նշեց, որ իրենց բրենդը հայտնի է նաեւ Վրաստանում, եւ հնարավոր է, որ այնտեղ եւս հյուրանոց ունենան, քանի որ շատ հաճախ զբոսաշրջիկները տարածաշրջան են այցելում: Ջեյմս Թուֆենկյանի համոզմամբ, եթե իրենք հյուրանոց բացեն Վրաստանում, ապա դա կնպաստի նաեւ դեպի Հայաստան զբոսաշրջիկների թվի ավելացմանը:

Հյուրանոցի բացմանը մասնակցած Երեւանի քաղաքապետ **Տարոն Մարգարյանը** ողջունեց նման հյուրանոցի բացումը Երեւանում: Նա տեղեկացրեց, որ Երեւանում 50 հյուրանոցներ կան եւ 50 մոթելներ, բայց զբոսաշրջային հոսքը պահանջում է, որ դրանց թիվն ավելանա: Քաղաքապետի տեղեկացմամբ, սկսած 2010-ից՝ տարեկան 100 հազարով ավելանում է Երեւան այցելող զբոսաշրջիկների թիվը: Նա նաեւ կարեւորեց «Թուֆենկյան ավանդական Երեւան»-ի կառուցումը որպես ներդրումային ծրագիր:

Էկոնոմիկայի փոխնախարար **Արա Պետրոսյանի** գնահատմամբ, ավանդական ոճով հյուրանոցները շատ գրավիչ են ոչ միայն Հայաստանում, այլեւ ցանկացած միջավայրում: Դրանք կառուցում են տեղական շինանյութերով, տեղական ճարտարապետական ոճով, մատուցվում են տեղական խոհանոցի ուտեստներ, ինչի շնորհիվ, ըստ փոխնախարարի, մարդիկ հաղորդակից են լինում տվյալ երկրի միջավայրին: «Թուֆենկյան» հյուրանոցների դեպքում ազգային ավանդական ոճը զուգակցվում է միջազգային բարձր չափանիշների հետ: Արա Պետրոսյանն այն կարծիքին է, որ «Թուֆենկյանը» շուտով կդառնա հանրաճանաչ միջազգային բրենդ: Նրա տեղեկացմամբ, այս տարի Հայաստանում կառուցվելու է եւս 4-5 հյուրանոց, այդքան էլ՝ եկող տարի:

Հյուրանոցի բացմանը մասնակցեց երկրի նախագահ Սերժ Սարգսյանը: Նա շրջեց հյուրանոցում, ծանոթացավ հյուրանոցային համարների պայմաններին եւ առաջարկվող ծառայություններին:

## «Զարգացող երկրներում բիզնես անելը հեշտ չէ»

Այն հարցին, թե ինչպե՞ս է գնահատում Հայաստանում բիզնես գործունեությունը, Ջեյմս Թուֆենկյանը պատասխանեց, որ ինքը բիզնես ունի Չինաստանում, Նեպալում, եւ զարգացող երկրներում բիզնես անելը հեշտ չէ: Ըստ գործարարի, Հայաստանում շահութաբերություն կա, բայց դա այնքան էլ բարձր չէ:

Մեկ այլ հարցի առնչությամբ Ջեյմս Թուֆենկյանը հայտնեց, որ Հայաստանում գորգերի արտադրության իր գործունեությունը չի դադարեցրել: Սակայն այն զգալիորեն անկում է ապրել, երբ դոլարի փոխարժեքը 580 դրամից իջավ մինչեւ 300 դրամի: Հիմա, երբ 400 դրամից ավելի է, այդ արտադրությունը նորից կվերականգնվի, բայց պետք է ավելացնել նաեւ աշխատավարձերը: Նա նշեց, որ պլանավորում են ավելացնել գորգերի արտադրության ծավալները, ինչին կնպաստի նաեւ հյուրանոցում գորգերի վաճառքի սրահի բացումը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

---

**ՏԵՂԻՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ**

# Ինչու Google-ը չի համագործակցում հայկական բանկերի հետ

*Հայ ծրագրավորողների նամակը ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանին*

**«Հայ ծրագրավորողներ» ստորագրությամբ մեր թերթի միջոցով ՀՀ ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանին հետեւյալ բովանդակությամբ նամակն են հղել.**

«Խնդրում ենք տեղեկացնեք, թե ինչու Google ընկերությունը չի համագործակցում հայկական բանկերի հետ, որի հետեւանքով Google Adsense-ի հայաստանցի բաժանորդների վաստակած գումարները բանկային փոխանցումով չի փոխանցվում Հայաստան: Փոխարենը փոստային առաքումով 2-3 ամսվա ընթացքում ուղարկվում է Citibank-ի չեկ, որը հայկական բանկերը հրաժարվում են կանխիկացնել, նրանցից մեկն էլ կանխիկացնելու համար պահանջում է, որ առնվազն 1 տարի լինես իրենց բանկի հաճախորդ: Այս պայմանը բավարարող երջանիկ այցելուն սպիտված է եւս 1-2 ամիս սպասել եւ ահռելի միջնորդավճար վճարել գումարը ստանալու համար: Մինչդեռ հասարակ բանկային փոխանցումը կտեւեր ընդամենը 1օր:

Մենք՝ հայաստանցի երիտասարդ ծրագրավորողներս, Ձեզ խնդրում ենք, որ քայլեր ձեռնարկեք Google-ի հետ բանակցելու եւ այս խնդիրը լուծելու համար:

Դա հնարավորություն կստեղծի, որ արտասահմանից Հայաստան լուրջ փողեր ներհոսեն, կօգնի ծրագրավորողներին կայանալ եւ զարգանալ Հայաստանում, եւ որոշ չափով կկրճատի լավ մասնագետների արտագնա աշխատանքը:

***Հ. Գ.*** *Ոչ պակաս կարեւոր խնդիր է եւ ամոթ է մեր երկրի համար, որ 2013-ին մենք չենք կարող նորմալ օգտվել նաեւ PayPal համակարգից»:*

# Վարչապետ-Դաշնակցություն

*1-ին էջից*

«ՀՅԴ-ն պարող, կենդանի կառույց է եւ, ի տարբերություն շատ շատերի, առողջ կառույց է, որտեղ անընդհատ քննարկումներ, տեսակետների բախումներ են լինում, մտքեր են առաջանում, եւ այսօր մեզ համար իսկապես այդպիսի շրջան է: Ուզենք թե չուզենք, անկախ ընտրություններին տրված մեր գնահատականներից, մենք խնդիրներ ունենք, երեք ընտրություններում մեծ հաշվով մենք ձախողվել ենք, եւ բնական է, որ մեր ներսում մենք քննարկում ենք, թողնենք մի կողմ ընտրությունների բնույթը, ընտրակաշառքը, վարչական ռեսուրսը, բայց գուցե ինչ-որ բան մեզ մոտ էլ է սխալ, մենք էլ ինչ-որ բաներում թերացել ենք: Մենք քննարկումների մեջ ենք, եւ դրանք առողջ քննարկումներ են, ոչ առաջին օրն է, ոչ էլ վերջին, որ փորձում են ՀՅԴ-ի մեջ պառակտումներ, բաժանումներ տեսնել, հանգիստ եղեք, որեւէ խնդիր այստեղ մի տեսեք»:

Այժմ Դաշնակցությունում այլ հարցով են զբաղված: Կուսակցությունը ձեռնամուխ է լինելու, որ Պռոշյանի նախկին գյուղապետ Հրաչ Մուրադյանի սպանությունը բացահայտվի: Հարցով կզբաղվի «Հրաչ Մուրադյան. Արդարության պահանջ» հասարակական շարժումը: «Մեզ պետք է, որ բացահայտվեն Հրաչ Մուրադյանի սպանության իրական մեղավորները, չենք ուզում, որ դատվեն անմեղ մարդիկ, եւ ի վերջո, այս գործի իրական բացահայտումը վստահության քվե կարող է դառնալ մեր արդարադատության համակարգի համար:

Տուժողի իրավապաշտպան, փաստաբան **Մելանյա Առուստամյանը** նշեց, որ տարիներ շարունակ ազատամարտիկ-գյուղապետին հետապնդել են, սպառնացել, իսկ սպանությունն այդ հետապնդումների վերջին օղակն էր: «Տարիներ առաջ հրդեհել էին Հրաչին պատկանող խոտի դեզը, ոստիկանները եկան, ասացին՝ միտումնավոր է արված, հետո առեւանգել էին Մուրադյանի եղբոր որդուն, հետո, երբ Հրաչը գնաց ազատելու եղբոր որդուն, կրակեցին նրանց մեքենայի վրա: Հիմա այդ կրակոցների գործը կարճվել է, բայց եթե չկարճվեր էլ, քննություն այնպես էր տարվում, որ մեղավորի դերում հենց Հրաչ Մուրադյանն է դառնում»:

Դաշնակցության անդամ Հրաչ Մուրադյանը սպանվել էր ապրիլի 2-ին գյուղապետարանի դիմաց: Նրա սպանությունը կատարելու կասկածանքով արդեն 2 ամսից ավելի կալանավորվել է նույն գյուղից Արայիկ Պետրոսյանը:

Հ. Հ.

# Պարգեւատրումներ

Օրերս «Ոսկե ծիրան» Երեւանի միջազգային կինոփառատոնի 10-ամյակին նվիրված հոբելյանական երեկույթի շրջանակներում մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը հատուկ մրցանակներով եւ մեդալներով պարգեւատրեց մի շարք կինոգործիչների: «Ոսկե ծիրան» Երեւանի միջազգային կինոփառատոնի հիմնադիր տնօրեն Հարություն Խաչատրյանին շնորհվեց ՀՀ Ժողովրդական արտիստի կոչում, իսկ ծրագրերի տնօրեն, կինոգետ Միքայել Ստամբոլցյանին՝ «Մովսես Խորենացի» մեդալ: Սուսաննա Հարությունյանին շնորհվեց ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

ՀՀ անկախության 20-ամյակի առթիվ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի հիմնադիրներից կինոռեժիսոր Ատոմ Էգոյանին շնորհվեց Պատվո շքանշան, իսկ դերասանուհի Արսինե Խանջյանը պարգեւատրվեց Հայրենիքի հանրության ծառայությունների համար Առաջին կարգի մեդալով:

Մշակույթի նախարարության Ոսկե մեդալով պարգեւատրվեցին «Ոսկե ծիրան» ՄԿՓ-ի փոխտնօրեն, կինոռեժիսոր Արա Խանջյանը, կինոռեժիսորներ Իշտվան Սաբոն, Յոս Ստելինգը եւ Մարգարեթ ֆոն Թրոթան:

# «Եղիցի լույս» մրցանակ շնորհվեց Արտավազդ Փելեշյանին

Երեկ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը «Ոսկե ծիրան» միջազգային ամենամյա կինոփառատոնի առիթով Հայաստանյայց առաքելական սուրբ Եկեղեցու սահմանած «Եղիցի լույս» մրցանակ շնորհեց մեծանուն կինոռեժիսոր Արտավազդ Փելեշյանին:

Մրցանակաբաշխությունից հետո իր զգացումները արտահայտեց Արտավազդ Փելեշյանը, որը շնորհակալությունը հայտնեց Վեհափառ հայրապետին՝ իրեն բարձր պատվի արժանացնելու համար:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

www.azg.am



# Սեռական դաստիարակությունը ճամբարում

Հայ ավետարանական եկեղեցու հավատացյալների պատմածներն ու բացատրությունները, ըստ «Քայքայիչ պաշտամունքից տուժածների օգնության եւ վերականգնողական կենտրոն» ՀԿ-ի նախագահ **Ալեքսանդր Ամարյանի**, ցույց են տալիս, որ Հայ ավետարանչական ընկերակցությունը, մասնավորապես ղեկավարներն ու որոշ անձինք, որոնք Հայաստան եկել են արտասահմանից, օգտագործում են այս եկեղեցին ի շահ իրենց բիզնեսի (Ավետարանչական բարեգործական ընկերակցությունը հիմնվել է Ավետարանական եկեղեցու կողմից):

Սակայն ավելի ցնցող էր վերջերս արդարադատության նախարարության ստացած բողոքն այն մասին, որ Հանքավանում գտնվող «Շողիկ» ճամբարում երիտասարդների ու անչափահասների հետ տարվել են սեռական այնտիպի դասընթացներ, որոնց դեմ կլինի իրեն հարգող յուրաքանչյուր հայ ծնող: Այս մասին տեղեկատվությունը լրագրողներին երեկ տրամադրեց Ալեքսանդր Ամարյանը:




Արդարադատության նախարարությունը տվել է նախազգուշացում, որ նման դասընթացներ հետագայում չկրկնվեն: Իսկ բողոքը մինչեւ արդարադատության նախարարություն հասավ, քանի որ եկեղեցու հոգեւոր հովիվ վերապատվելի Արմեն Միքայելյանը թույլ տվեց, որ մարդկանց բողոքը Հայ ավետարանական եկեղեցու անվան տակ կատարվածի մասին հասնի մինչեւ պետական մարմիններ:

Իսկ քրիստոնեական դասընթացներն անցկացնում է ոչ թե եկեղեցին, այլ Ավետարանչական ընկերակցությունը, որի նպատակը, ըստ Ալեքսանդր Ամարյանի, հայ ազգի կրճատումն է, եւ ընկերակցությունը տարածում է այլասերվածություն:

Բացի սեռական խեղված դաստիարակություն տալուց՝ մեկ ուրիշ խախտում նույնպես հայտնաբերվել է ընկերակցության ներսում, սրան եւս անդրադարձավ Ալեքսանդր Ամարյանը: Ավետարանչական ընկերակցության Ղարաբաղի մասնաճյուղը Ավետարանական եկեղեցու ներկայացուցչին տվել է աշխատանքային մի քանի գրքույկ, մինչդեռ նույն անձին նույն կազմակերպությունը կարող է տալ լրացված աշխատանքային միայն մի գրքույկ, իսկ նույն մարդուն մի քանի գրքույկ տալը աշխատանքային օրենսդրության կոպիտ խախտում է. «Իսկ նման դեպքեր նրանց մոտ շատ կան»:

Վերապատվելի **Արմեն Միքայելյանը**, որը նաեւ Արագածոտնի մարզի Ավետարանչական ընկերակցության ներկայացուցիչն է, պատմեց, որ երիտասարդաց ճամբարի պատասխանատու Գեւորգ Գասպարյանի հավանությամբ է իրականացվել սեռական այդ դաստիարակությունը, բայց զարմանալիորեն այսօր նույն անձը շարունակում է լինել ճամբարի տնօրեն:

Արմեն Միքայելյանը մի տարի կլինի, որ դիմել է իրենց ղեկավարությանը տարբեր մտահոգություններով ու տարբեր բացթողումների համար, սակայն հաշվի չեն առել. «Իսկ ես զգուշացրել եմ՝ եթե հաշվի չառնեք, ապա ես կդիմեմ համապատասխան պետական մարմիններին»: Սակայն մի տարուց ավելի կլինի, որ իր ղեկավարությունից Արմեն Միքայելյանը պատասխան չի ստացել:

Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի ներկայացուցիչն այժմ Հարութ Ներսեսյանն է, հետեւաբար նաեւ նա է կատարվածի համար պատասխանատու:

Պրն **Հարութ Ներսեսյանի** հետ «**Ազգը**» երեկ հեռախոսազրույց ունեցավ, վերջինս ասաց, որ ասուլիսի ժամանակ հնչած հայտարարություններին պատասխանող հաղորդագրություն այսօր կուղարկեն լրատվամիջոցներին: Հաջորդ համարում դրան նույնպես կանդրադառնանք:

Ալեքսանդր Ամարյանը նաեւ մտահոգություն է հայտնում, որ հատկապես ամառային արձակուրդների սեզոնին հարցականի տակ է, թե քաղաքից դուրս գտնվող հանգստյան ճամբարներում ի՞նչ է դասավանդվում երեխաներին, իսկ ծնողները հաճախ անտեղյակ են, թե ճամբարներում իրականում ի՞նչ է կատարվում: Հարցին՝ իսկ ինչո՞ւ է հենց սեռական դաստիարակությունը դարձել թիրախ, Ալեքսանդր Ամարյանը պատասխանում է. «Քանի որ այդ ճանապարհով մարդկանց մշակելը հեշտ է, այսինքն՝ աշխատում են մարդու հիմնական բնազդի վրա»:

Երեկ նաեւ տեղեկացանք, որ այս պահի դրությամբ կոնկրետ «Շողիկ» ճամբարում սեռական դաստիարակություն չի դասավանդվում:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ

# «Բաստիլի գրավումը»

Երբ Սովետական Միությունը դաշնակիցների օգնությամբ հաղթեց ֆաշիստական Գերմանիային, պարտվեց Հիտլերը, բայց ոչ՝ ֆաշիզմը: Երբ 224 տարի առաջ՝ հուլիսի 12-ին, ֆրանսիացի ժողովուրդը գրավեց Բաստիլը, դա ամենեւին չնշանակեց, որ էլ «բաստիլներ» չկան:

Մեր երկրում Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն, ընդգծելով, որ «Բաստիլի գրավումը ֆրանսիացի ժողովրդի համար նշանակեց ու խորհրդանշեց ազատության ու ժողովրդավարական կարգերի հաստատումը Ֆրանսիայում», շեշտում է նաեւ, որ «Հիմա էլ, ինչպես Ֆրանսիայում, ինչպես Հայաստանում, ինչպես աշխարհի բոլոր երկրներում էլի «բաստիլներ» կան, որոնք պետք է գրավել»: Դեսպան Ռենոն «Բաստիլ գրավել» ասելով նկատի ունի բարեփոխումներ իրականացնելը, որոնք «չեն կարող կանգառ ունենալ, որոնք պետք է անընդհատ լինեն՝ անգամ Ֆրանսիայում, իհարկե նաեւ Հայաստանում»: Օրինակ, ընտրվելով Ֆրանսիայի նախագահ՝ Ֆրանսուա Օլանդը, դեսպան Ռենոյի տեղեկացմամբ, իրականացրել է երկրում հետեւյալ բարեփոխումը. «Այսուհետեւ, երբ Ֆրանսիայի քաղաքացին պետական այս կամ այն գերատեսչությանը պաշտոնական հայց-նամակ է հղում, ապա տվյալ գերատեսչությունը պարտադիր պետք է պատասխանի քաղաքացուն»: Դեսպան Ռենոն չասաց, բայց մենք հասկացանք, որ այսպիսով ֆրանսիական պետությունը չի արհամարհում սեփական քաղաքացիներին, ինչը եւս, իր չափով, «Բաստիլի գրավում է»:

Այդուհանդերձ, եթե, դիցուք, Ֆրանսիայի քաղաքացին պետական համապատասխան գերատեսչությունից թույլտվություն է խնդրում, օրինակ, շինարարություն իրականացնելու համար, իսկ տվյալ գերատեսչությունը համապատասխան ժամանակահատվածում չի պատասխանում քաղաքացուն, ուրեմն Ֆրանսիայի քաղաքացին ոչ թե իրեն անտեսված է զգում, այլ պետության լռությունը ընկալում է որպես պետության համաձայնություն: Այսինքն, եթե Ֆրանսիան լռում է, ուրեմն Ֆրանսիան համաձայն է:

Մեր երկրում լռությունը, այն էլ, երբ պետությունն է լռում, ամենեւին էլ համաձայնության նշան չէ, մեր երկիրը բազմաթիվ քաղաքացիներ լքում են հենց այս՝ պետության լռության պատճառով: Մեր երկրում իրականացված ու իրականացվող բարեփոխումները հիմնականում անհասկանալի են քաղաքացիների մեծամասնության համար, եթե չասենք՝ անընդունելի են, օրինակ, կրթության ոլորտում:

Հայաստանի քաղաքացին ընդամենը պետական եւ պետական հարցերում անտեսումից դուրս գալ է ուզում, սա՝ ամենակարեւորը: Հայաստանի քաղաքացին Բաստիլ չի գրավել, բայց պակաս արժանի չէ դրան:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Հայկական «Մուսկաս» գինին հաղթել է միջազգային մրցույթում

Ֆրանսիայում անցկացված «Muscats du Monde» («Աշխարհի լավագույն մուսկատները») միջազգային գինու մրցույթում հաղթող է ճանաչվել «Արմենիա» գինու գործարանի հայկական «Մուսկաս» գինին: Ըստ eurowine.com.ue կայքի, մրցույթն անցկացվել է 13-րդ անգամ:

«Մուսկաս»-ը լավագույնն է ճանաչվել 24 երկրների 224 տեսակի գինիների շարքում, առաջ անցնելով ֆրանսիական, ավստրիական, բրազիլական, պորտուգալական գինիներից:

«Մուսկաս»-ը վարդագույն, կիսաքաղցր գինի է:

**Սրբագրում եւ խմբագրում**
ամեն ծավալի ու բովանդակության հայերեն
տեքստերի, գրքերի
E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03:

# Orange Հիմնադրամի աջակցությամբ Հայկական ակնաբուժության նախագիծը մեկնարկում է անվճար ակնային զննումների եւ բուժումների ծրագիրը Լոռու մարզում

Շարունակվում է Orange Հիմնադրամի եւ Հայկական ակնաբուժության նախագծի «Լույս հայի աչքերին» ակնաբուժական ծրագիրը: Ավարտելով աշխատանքը Կոտայքի ու Տավուշի մարզերում՝ հուլիս եւ օգոստոս ամիսներին բժշկական խմբերը կլինեն Լոռու մարզում, որտեղ կիրականացնեն անվճար ակնային զննումներ ու լազերային բուժումներ, իսկ սոցիալապես անապահով խմբերում ընդգրկված մարդիկ հնարավորություն կունենան նաեւ անվճար վիրահատվել եւ ստանալ ակնոցներ: Լոռու մարզում նախատեսվում է հետազոտել ավելի քան 4,000 բնակչի, անցկացնել շուրջ 300 վիրահատություն եւ տրամադրել 1,700 ակնոց:

Հուլիսի 8-ից 13-ը Հայկական ակնաբուժության նախագծի ակնաբույժները կլինեն Թումանյանի, հուլիսի 15-ից 22-ը՝ Գուգարքի եւ հուլիսի 24-ից 27-ը՝ Տաշիրի տարածաշրջաններում: Հուլիսի 29-ից օգոստոսի 2-ը նրանք կաշխատեն Ստեփանավանի, իսկ օգոստոսի 5-ը 14-ը՝ Սպիտակի տարածաշրջաններում: Աչքի շարժական հիվանդանոցը կկայանի Ալավերդիում, Վանաձորում, Ստեփանավանում եւ Սպիտակում:

Մանրամասների համար Լոռու բնակիչները պետք է դիմեն իրենց բնակավայրի առողջության կենտրոն եւ հետեւեն այնտեղ փակցված հայտարարություններին: Տեղեկություններ կարելի է ստանալ նաեւ ՀԱՆ-ի գրասենյակից՝ զանգահարելով 010 55 90 68 կամ ներբեռնելով ամբողջական ժամանակացույցն այստեղից. http://goo.gl/egDMM:



«Այս տարվա վերջում մենք կարձանագրենք, որ շուրջ տասը տարիների ընթացքում Հայկական ակնաբուժության նախագծի «Լույս հայի աչքերին» ծրագրի շրջանակում հաջողվել է Հայաստանի մարզերում իրականացնել հինգ լիարժեք շրջայց: Orange Հիմնադրամը միացավ մեզ 2011 թ.: Նկատում ենք, որ «Լույս հայի աչքերին» նշանաբառն արդեն ասոցացվում է նաեւ Orange Հիմնադրամի հետ, քանի որ այս տարիների ընթացքում, աջակցելով Հայկական ակնաբուժության նախագծի աշխատանքներին, Հիմնադրամը մասնակից է լինում Հայաստանի գրեթե բոլոր մարզերում ակնաբուժական ծառայությունները հասանելի դարձնելու գործին: Այժմ աշխատում ենք Լոռիում, առջեւում Շիրակն է եւ Արագածոտնը»,- ասաց ՀԱՆ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Նունե Եղիազարյանը:

«Հայկական ակնաբուժության նախագծի հետ միասին մենք արդեն 8 մարզում ենք եղել, որտեղ տասնյակ հազարավոր մարդիկ կարողացել են անվճար ակնաբուժական օգնություն ստանալ: Երջանիկ ենք այս համագործակցության համար, քանի որ մեր ընկերության համար կարեւոր է ոչ միայն իր բիզնես գործունեությունը, այլ նաեւ այն, թե ինչքանով կարող ենք օգտակար լինել երկրին ու հասարակության խոցելի անդամներին: Orange Հիմնադրամն իր առջեւ նպատակ է դրել իրական փոփոխություններ բերել այս մարդկանց կյանքում», ասաց Orange Հիմնադրամի խորհրդի նախագահ Ֆրանսիս Ժելիբտերը:

Տավուշի մարզի երկու բնակիչների մասին պատմող տեսանյութը կարելի է դիտել հետեւյալ հղումով. http://bit.ly/11I7Fac

## Վրաստան

# Իվանիշվիլին չի շտապում կատարել Ջավախքի հայ բնակչությանը տված խոստումները

*Հարցազրույց «Երկիր» միության նախագահ Մեւակ Արծրունու հետ*

**- Իվանիշվիլիի իշխանության գալուց հետո կարծես թե հույսեր առաջացան, որ Վրաստանում դրական փոփոխվելու են կառավարման մեթոդները եւ այդ փոփոխությունները զգալ են տալու նաեւ հայ բնակչության նկատմամբ քաղաքականության մեջ: Ձեր կարծիքով՝ ինչքանո՞վ են այսօր այդ հույսերը արդարացել:**

- Այսօր կարելի է փաստել, որ որեւէ էական կառուցվածքային փոփոխություն Վրաստանի կառավարման մոդելի մեջ չի՛ արձանագրվել: Իվանիշվիլին Սաակաշվիլիի ռեժիմի դեմ պայքարը ստանձնեց եւ հաղթանակի հասավ հալածանքների դադարեցման, բռնատիրական համակարգի փոփոխման, ժողովրդավարության վերահաստատման եւ արդարության վերականգնման կարգախոսներով: Սակայն, գալով իշխանության, նա, ըստ էության, չձեռնարկեց քայլեր՝ ուղղված Սաակաշվիլիի ռեժիմի կառավարման համակարգի կազմաքանդմանը, փոխվեցին վերին օղակները, բայց ո՛չ համակարգը: Կառավարման ստորին եւ միջին օղակներում մնում են նույն անձինք. պարզապես նրանք նախկինում ծառայում էին Սաակաշվիլուն, այսօր՝ Իվանիշվիլուն:

Այո, ձեռնարկվեցին քայլեր՝ ուղղված մթնոլորտի լիցքաթափմանը, բացահայտվեցին Սաակաշվիլիի ռեժիմի ոչ ժողովրդավարական, իրենց բնույթով կրիմինալ առանձին գործողությունները, սակայն այդ ուղղությամբ արված քայլերը մնացին խիստ թիրախավորված, ուղղված անձամբ Սաակաշվիլիի եւ նրա մերձավոր շրջապատի դեմ:

Մյուս կողմից՝ Իվանիշվիլին չուզեց որեւէ կերպ սանձահարել իր կոալիցիայի մաս կազմող քաղաքական բազմաբնույթ ուժերին, նրանց միավորել կոնկրետ դրական քաղաքական պլատֆորմի շուրջը: Ընդհակառակը՝ կարծես թե հենց այդ բազմազանության մեջ է Վրաստանի նոր վարչապետը տեսնում իր ազդեցության կայունության ու երկարակեցության երաշխիքը: Այսինքն՝ այսօր մենք կարծես թե ականատես ենք, որ Վրաստանը վերադառնում է Շեւարդնաձեի կառավարման մոդելին՝ պահպանելով Սաակաշվիլի-Մերաբիշվիլի զույգի ստեղծած ուժային կառույցների համակարգը՝ որպես ներքին զսպող լծակ:

Հիմա կարծես թե Իվանիշվիլին գոնե ներքին ճակատում լուծել է իր խնդիրները եւ պատրաստվում է բացահայտել իր քաղաքականության կերպը, որը, մեր գնահատմամբ, կլինի ծայրաստիճան իրատեսական եւ խիստ զգուշավոր:

**- Ինչպե՞ս են ազդել Ձեր նկարագրած գործընթացները վրացահայության խնդիրների առումով: Այս ամենը Ջավախքում ի՞նչ անդրադարձ է ունեցել եւ կունենա**

- Իվանիշվիլիի եւ նրան նախորդող Վրաստանի բոլոր ղեկավարների գործունեությունը գնահատելու համար հարկավոր է ընդամենը տեսնել, թե նրանցից յուրաքանչյուրը գործնականում ի՞նչ չափով է բավարարել ջավախահայության պահանջները՝ քաղաքացիական մասնակցության, լեզվի, կրթական, կրոնական, մշակութային եւ այլն: Ոչ մի բնագավառում իրավիճակը չի փոխվել:

Վրացահայության եւ ջավախահայության խնդիրների առումով Իվանիշվիլին շարժվում է նույն տրամաբանությամբ, ինչը նա որդեգրել է համավրացական գործընթացներում: Գալով իշխանության՝ նա որոշ քայլեր ձեռնարկեց՝ ուղղված ջավախահայության դեմ Սաակաշվիլիի առավել խայտառակ եւ աղմուկ հանած գործողությունների հետեւանքների վերացմանը՝ ազատ արձակվեց ջավախահայ գործիչ Վահագն Չախալյանը, վերացվեց Մելիք Ռաիսյանի եւ այլ գործիչների նկատմամբ հետախուզումը եւ քրեական հետապնդումը, թույլ տրվեց Շիրակ Թորոսյանի եւ իմ մուտքը Վրաստան, առժամանակ որոշ չափով մեղմացվեց ուժային կառույցների ճնշումը: Այո, սրանք քայլեր էին, որոնք օբյեկտիվորեն դրական դեր խաղացին վրացահայության եւ ջավախահայության կյանքում: Սակայն արդյոք Իվանիշվիլին արեց այդ քայլերը ելնելով վրացահայության խնդիրները լուծելու ձգտումից եւ տրամաբանությունի՞ց: Միանշանակ՝ ոչ:

Այսօր կարելի է փաստել, որ Իվանիշվիլին չի շտապում կատարել իշխանության համար պայքարի ժամանակ վրացահայությանը եւ ջավախահայությանը տված խոստումները՝ վերացնել Ջավախքի հասարակականքաղաքական կյանքի եւ կառավարման մարմինների նկատմամբ ուժային կառույցների ճնշումը, զարկ տալ հայաբնակ շրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանը, շնորհել հայերենին տարածաշրջանային լեզվի կարգավիճակ, օժանդակել Ախալքալաքում հայերենի հիմքով համալսարանի բացմանը, վերադարձնել բռնագրավված եկեղեցիները եւ այլն: Դրանք մնում են լոկ խոստումներ:

Իվանիշվիլին պարտավոր էր իշխանությունը ստանձնած պահին լուծել առնվազն հայերեն լեզվի կարգավիճակի խնդիրը՝ ոչ թե վրացահայության, այլ՝ Եվրոպայի առջեւ Վրաստանի ստանձնած պարտավորությունների իմաստով: Բազմիցս նշել ենք՝ Վրաստանը պարտավոր է վավերացնել Փոքրամասնությունների եւ տարածաշրջանային լեզուների եվրոպական խարտիան եւ համապատասխանեցնել իր օրենքները այդ փաստաթղթին, համապատասխանաբար տալով հայերենին շրջանային լեզվի կարգավիճակ: Դա առ այսօր չի արվել:

Վրաստանի նոր իշխանությունները չշնորհեցին ջավախահայ քաղաքական գործիչ Վահագն Չախալյանին քաղբանտարկյալի կարգավիճակ, հետախուզման մեջ է մնում ջավախահայ ակտիվիստ Գուրգեն Շիրինյանը, առ այսօր որեւէ լուրջ քայլ չի ձեռնարկվել Չախալյանի ձերբակալությանը նախորդած 2008ի հուլիսի 17-21ի դեպքերի անաչառ հետաքննության ուղղությամբ, չեն վերադարձվել Ջավախքի մարզմշակութային միությանը պատկանող շենքը եւ գույքը:

Հունիսի 28-ին Նինոծմինդայի շրջանի Գոնդուրա գյուղում տեղի ունեցած միջադեպի ժամանակ վրաց հատուկջոկատայինների կողմից ձերբակալվեց Վահագն Չախալյանի եղբայրը՝ Արմեն Չախալյանը, որին մեղադրանք է առաջադրվել Վրաստանի ՔՕ 239-րդ հոդվածով (խուլիգանություն իշխանության ներկայացուցչի նկատմամբ): Միայն այն հանգամանքը, որ հունիսի 28-ի միջադեպի շուրջ 150 մասնակիցներից եւ ներկաներից այսօր կալանքի տակ է միայն Արմեն Չախալյանը, վկայում է, որ մենք գործ ունենք ակնհայտ քաղաքական ենթատեքստ պարունակող թիրախային գործողության հետ :

Փաստորեն, ջավախահայության հանրային կյանքում այսօր ընթանում են ոչ թափանցիկ, ուժային կառույցների կողմից ուղղորդվող գործընթացներ: Այդ գործընթացները ուղղակի հակասում են ժողովրդավարության հաստատման, օրենքի եւ արդարության վերականգնման Իվանիշվիլիի կողմից հայտարարված առաջնահերթությունների տրամաբանությանը:

Ջավախահայ ակտիվիստներին հալածելու Սաակաշվիլիի քաղաքականությունը փոխարինվում է Շեւարդնաձեի «բաժանիր, որ տիրես», ջավախահայկական քաղաքական դաշտը մասնատելու, խմբավորումներ ստեղծելու եւ դրանք իրար դեմ լարելու քաղաքականությամբ:

Ջավախքի տեղական ուժերը, որոնք հավատալով հայ բնակչության խնդիրները լուծելու Իվանիշվիլիի խոստումներին, ներիշխանական պայքարում բռնեցին նրա կողմը՝ ուղղակիորեն վտանգելով իրենց կյանքը, այսօր իրենց խաբված են զգում: Մելիք Ռաիսյանը, Նորիկ Կարապետյանը, Վահագն Չախալյանը եւ այլք իրենց հարցազրույցներում բազմիցս նշում են իրենց մտահոգությունները: Առ այսօր որեւէ արձագանք չկա:

**- Ձեր արձանագրած խնդիրները կարծես թե արդարացնում են նրանց պնդումները, որ Ջավախքի խնդիրը որպես ջավախահայության իրավունքների համար տարվող պայքար դիտարկելը եւ այդ ուղղությամբ գործողությունները ոչ հեռանկարային են, շոշափելի արդյունքի չեն հանգեցնելու:**

- Համոզված եմ որ Ջավախքի խնդրի՝ որպես մարդու եւ ազգային փոքրամասնության իրավունքի հարցի, ջավախահայության իրավունքների համար տարվող պայքարի, դիտարկմանը որեւէ իրատեսական այլընտրանք չկա: Պայքարի այդ ռազմավարությամբ հաջողվեց հասնել նրան, որ ջավախյան շարժումը դուրս եկավ մարգինալ վիճակից, ջավախահայության պահանջները ու պայքարը դադարեցին ընկալվել որպես երրորդ կողմից հրահրված «անջատողականություն»: Ընդհակառակը այսօր մարգինալ է դիտվում հենց Սաակաշվիլին իր շարունակական ջղաձիգ հակահայկական պնդումներով: Ջավախահայության պայքարը մարդու իրավունքների դաշտ փոխադրելու շնորհիվ էր, որ հնարավոր եղավ արգելակել ջավախահայության խնդիրները կոշտ միջոցներով լուծելու Սաակաշվիլի-Մերաբիշվիլու զույգի ախորժակները:

Մյուս կողմից՝ նաեւ համաշխարհային մակարդակով հասկանալի, ճանաչելի եւ ընդունելի են դարձել ջավախահայության պահանջները, եւ կարելի է ասել, ժամանակի խնդիր է դարձել նրանց հաստատումը Վրաստանի իշխանությունների կողմից: Մնում է՝ հայտնվի մի ղեկավար, որն իր սեփական պետության շահերի գիտակցություն եւ ուժ ունենա կյանքի կոչելու այդ իրավունքները:

Վրաստանի բնակչության հակահայ լինելու կարծիքը միֆ է: Տարիներ շարունակ գործել ենք Վրաստանում: Վրաստանում բնակվող ոչ հայ քրիստոնյա բնակչությունը միանշանակ հայամետ է, բացառությամբ փոքրաթիվ ազգայնականների: Վրաստանում հակահայկական տրամադրությունները հրահրվում են թուրքադրբեջանական շրջանակների կողմից:

Իվանիշվիլին չի կարող սրա մասին անտեղյակ լինել: Պարզապես նրա համակարգը, անմիջական շրջանակը, անվտանգության շրջանակները, Վրաստանի արտաքին քաղաքականության կառուցողները ճիշտ չեն գնահատում Վրաստանի հզորացման հեռանկարներում ընդհանրապես վրացահայության եւ մասնավորապես ջավախահայության գործոնը:

Վրացական իշխանությունները պարտավոր են վերջիվերջո գիտակցել, որ ջավախքահայության խնդիրն իր էությամբ ինքնորոշման խնդիր չէ, այլ տվյալ տարածքում հայկական գործոնի պահպանման ու զարգացման համար երաշխիքների ստեղծման խնդիր: Այդ առումով հայ բնակչության իրավունքների հարգումը, խնդիրների լուծումը միմիայն նպաստելու են Վրաստանի կայացմանը: Եվ ընդհակառակը, իրերի ներկա վիճակը միմիայն լրացուցիչ բեռ է լինելու, խոչընդոտելու է Վրաստանի վերակայացմանը: Իվանիշվիլին այսօր տակավին ունի քաղաքական կապիտալ՝ կատարելու Վրաստանի հայ բնակչության առջեւ նախընտրական շրջանում ստանձնած պարտավորությունները:

Իր հերթին ջավախահայությունը պարտավոր է հետեւողականորեն շարունակել բարձրաձայնել իր խնդիրները՝ բոլոր օրինական մեթոդներով պահանջելով կենտրոնական իշխանություններից դրանց լուծումը: Մոտակա նախագահական ընտրությունները փայլուն առիթ են ընձեռում այդ ուղղությամբ կոնկրետ քայլեր ձեռնարկելու համար: Ջավախահայությունը պետք է Վրաստանի հաջորդ նախագահից պահանջի ձերբազատվել շեւարդնաձեական եւ սաակաշվիլիական ժամանակաշրջանի հանցագործ գործիչներից ու գործելաոճից, հայկական հարցերի նկատմամբ ստեղծված անհեռանկար կարծրատիպերից եւ որդեգրի հայվրացական եւ ՀայաստանՎրաստան հարաբերությունների նոր որակ՝ երկու պետությունների եւ Վրաստանի ամբողջ ժողովրդի կայունության եւ բարգավաճման նպատակով:

---

**ՎՏԱՆԳԱՎՈՐ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ**

## Թուրք-ադրբեջանական զորավարժություններ...

*1-ին էջից*

**Ասվածից կարելի էր հասկանալ, որ թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժություններ տեղի կունենան ոչ ավելի վաղ, քան Թուրքիայի նախագահը կգտնվի Ադրբեջանում:**

**Այդուհանդերձ, օրվա երկրորդ կեսին haqqin.az-ը տեղեկագրեց, որ «թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժություններն արդեն սկսվել են եւ կտեւեն մինչեւ հուլիսի 28-ը» (տես http://haqqin.az/news/7467): Ընդսմին, «զորավարժությունները տեղի են ունենում Բաքվում եւ Նախիջեւանում»: Դրանց նպատակը, ըստ պաշտոնական հաղորդագրության, «երկու երկրների զինծառայողների միջեւ փորձի փոխանակումն է»:**

**Թուրքական կողմից Բաքվում զորավարժություններին մասնակցում է «թուրքական բանակի հետեւակային մի ստորաբաժանում, իսկ Նախիջեւանում՝ մեկ մոտոհրաձգային ջոկ»: Ադրբեջանական լրատվամիջոցն իր հրապարակումը վերնագրել է «Թուրքական զորքերը Նախիջեւանում են», ինչը կարծես լիովին արտացոլում է թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժությունների բուն նպատակադրվածությունը:**

**Արժե թերեւս նկատել տալ, որ Բաքվի «Զերկալո»-ն երեկվա համարում ծավալուն հոդված էր տպագրել «Իրանը պատերազմի է նախապատրաստվում» խորագրով, որտեղ խոսք կար Կասպից ծովում Իրանի իսլամական կորպուսի պահապանների վարժական կենտրոն եւ ռազմածովային ուժերի մշտական հենակետ ստեղծելու՝ պաշտոնական Թեհրանի կողմից արդեն իսկ ընդունված որոշման մասին:**

**Վերլուծականի հեղինակն անդրադարձել էր նաեւ Կասպից ծովի ավազանում ռուս-իրանական համատեղ զորավարժություններ անցկացնելու մասին Մոսկվայի եւ Թեհրանի միջեւ ձեռք բերված համաձայնությանը եւ ավելացրել, թե «մինչ այժմ Իրանը Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմածովային ուժեր ուներ միայն Պարսից ծոցում»:**

**Որեւէ կապ կա՞ Կասպից ծովում ռուս-իրանական եւ Բաքվում ու Նախիջեւանում թուրք-ադրբեջանական զորավարժությունների միջեւ՝ ռազմական փորձագետների խնդիրն է: Նկատենք միայն, որ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ երկիր է, եւ նրա զինված ուժերի թեկուզ «մեկ մոտոհրաձգային ջոկի» ներկայությունն Իրանին սահմանամերձ Նախիջեւանում պաշտոնական Թեհրանի կողմից կարող է ընկալվել որպես բացահայտ թշնամական քայլ:**

**Չենք խոսում այն մասին, որ Նախիջեւանը սահմանակից է նաեւ Հայաստանին, որի հանդեպ թուրք-ադրբեջանական տանդեմի թշնամական վերաբերմունքը որեւէ մեկի համար գաղտնիք չէ: Նախիջեւանում թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժությունը նաեւ չի «տեղավորվում» ադրբեջանական կողմից ամենաբարձր մակարդակով բազմիցս հնչեցված «հավաստիացումների» համատեքստում, թե ենթադրյալ պատերազմը «չի ներառի Հայաստանի միջազգայնորեն ճանաչված տարածքը»:**

**Փաստը հակառակն է հուշում՝ որ Թուրքիան եւ Ադրբեջանը համատեղ ձգտում են հավանական պատերազմի թատերաբեմ դարձնել նաեւ Նախիջեւանը՝ Հայաստանի համար դրանից բխող շոշափելի սպառնալիքներով հանդերձ: Եվ այս ամենը կատարվում է այն ժամանակ, երբ Մինսկի խմբի համանախագահ երկրների առաջնորդները հրապարակային հայտարարում են, որ ԼՂ խնդիրը ռազմական լուծում չունի:**

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Հունաստանը փոխում է ԵՄ-ի գազատրանսպորտային քարտեզը

Որքան էլ խոսվի այլընտրանքային էներգիայի եւ ապագայի էներգիայի զարգացման եւ հնարավորությունների մասին, բոլորը թերեւս կհամաձայնեն այն փաստին, որ բնական էներգիայի ռեսուրսները՝ նավթը եւ գազը, կարեւորագույն դեր են խաղում համաշխարհային տնտեսության մեջ եւ դեռեւս պահպանում են իրենց անփոխարինելի դերը համաշխարհային շուկայում: Ավելորդ չի լինի ասել, որ բնական էներգիայի աղբյուրները բարձրացնում են ոչ միայն տվյալ ռեսուրսներով հարուստ երկրի աշխարհաքաղաքական դիրքը եւ դարձնում համաշխարհային տնտեսության խաղակից, այլ նաեւ ռազմավարական նշանակություն հաղորդում այն երկրներին, որոնք այդ պաշարների փոխադրման տարանցիկ երկրներ են:

Բնական ռեսուրսների տեղափոխման տարանցիկ երկրների քարտեզում կարեւորագույն դերում է հայտնվել Հունաստանը՝ անդրադրիատիկ գազատարով Ադրբեջանից Եվրոպա բնական գազի տեղափոխման մասին Ադրբեջանի՝ հունիսի 28-ի պաշտոնական հայտարարությունից հետո: Այսուհետ՝ Կասպից ծովից բնական գազը Ադրբեջանից Թուրքիայով կտեղափոխվի Եվրոպա, անցնելով Հունաստանի եւ Ալբանիայի միջով, հասնելով մինչեւ Իտալիա: 860 կմ երկարությամբ ձգվող գազատարի 550 կմ հատվածը բաժին է ընկնում Հունաստանի տարածքին, ստեղծելով բազմահազար աշխատատեղեր եւ մինչեւ 2019թ.-ի վերջը (այսինքն՝ գազատարի կառուցման ավարտը) ստեղծելով ավելի քան 1,5 մլրդ եվրո ներդրումներ, իսկ մոտակա 50 տարվա մեջ (2019-2069թթ) հասցնելով մինչեւ 35 մլրդ եվրոյի:

Անդրադրիատիկ գազատարը հիմնովին կփոխի հարավային Եվրոպայի աշխարհաքաղաքական դերը՝ դարձնելով Հունաստանը էներգիայի քարտեզի կապող օղակ եւ ստեղծելով Եվրոմիությունում բոլորովին նոր իրավիճակ. նոր գազատարի միջոցով Եվրոմիությունը կկրճատի իր էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից, որը Եվրոմիության գազի միակ մատակարարն էր, իսկ Ադրբեջանն էլ իր հերթին ավելի կմոտենա Եվրոմիությանը, քանի որ Real Politics-ի կանոններում մարդու իրավունքների եւ ազատության հիմնահարցերը երկրորդական են, երբ խոսքը ազգային եւ տնտեսական շահի մասին է: Բացի այն, որ TAP (Trans Adriatic Pipeline) պրոեկտի միջոցով Ադրբեջանը դառնում է ԵՄ-ի համար ռազմավարական նշանակության երկիր, նաեւ էլ ավելի է մոտենում Հունաստանին, որը ռազմավարական նշանակության բարեկամ երկիր է Հայաստանի համար: Անդրադրիատիկ գազատարը նաեւ ստեղծում է ընդհանուր շահեր Հունաստանի եւ Թուրքիայի միջեւ, ինչպես նաեւ Հունաստանի եւ Ալբանիայի միջեւ, եւ ստեղծում փոխկախվածություն՝ ռազմավարական համագործակցության ամուր հիմք ստեղծելով: Կարեւոր է նշել նաեւ ադրբեջանական Socar ընկերության կողմից հունական DESFA ընկերության ձեռքբերումը, ինչը նշանակում է, որ Հունաստանի ներքին գազամատակարարումը նույնպես կիրականացվի ադրբեջանական կազմակերպության կողմից:

Թերեւս կարեւորագույն կետերից է այն, որ անդրադրիատիկ գազատարը, ի տարբերություն ռուսական «Հարավային հոսքի», անցնելով Հունաստանի եւ Ալբանիայի միջով, «մոխրագույն ոսկին» կհասցնի նաեւ հյուսիսային բալկանյան երկրներ, որոնք կախված են ռուսական գազից, ինչն էլ իր հերթին ավելի կհեշտացնի նրանց ինտեգրումը Եվրոմիությանը:

Հունաստանը հնարավորություն է ստեղծում տվյալ գազատարի ճյուղավորումը նաեւ դեպի Բուլղարիա, Ռումինիա, ինչն էլ թերեւս հիմք հանդիսացավ Նաբուկո նախագծի պաշտոնապես չեղյալ հայտարարվելու համար:

Վերը նշվածից պարզ երեւում է տարածաշրջանի երկրների ռազմավարական դիրքերի փոփոխությունը եւ նրանց ակտիվությունը այդ գործընթացներում: Այս փաստը չպետք է անուշադրության մատնվի մեր կողմից, այլ՝ հակառակը, պետք է մանրամասնորեն ուսումնասիրենք բոլոր իրադարձություններն ու զարգացումները, քանի որ դրանք անմիջական ազդեցություն ունեն մեր երկրի վրա:

Հայաստանը, իր աշխարհագրական դիրքով գտնվելով «Նոր մեծ խաղի» կենտրոնում, իր աշխարհաքաղաքականությունը պետք է մոտեցնի եւ հարմարեցնի այս նոր ձեւավորվող իրավիճակին: Թերեւս չպետք է մոռանանք, եւ պարտել ենք ու գիտենք մեր պատմությունից, որ միջազգային հարաբերություններում տնտեսական շահերը վեր են եւ առաջնային, քան երկրների բարեկամությունն ու զգացմունքները:

Արագ փոփոխվող միջազգային համակարգում ժամանակները փոխվում են՝ ստեղծելով նոր իրավիճակ: Միգուցե մենք մեր ժամանակին ենք սպասում, բայց ժամանակը ոչ ոքի չի սպասում... Հարկավոր է գործել հիմա...

**ԱՆԱՀԻՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**

**Աթենքի Քաղաքագիտության եւ սոցիոլոգիայի համալսարանի միջազգային եւ եվրոպական հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտ**

# Microsoft-ը օժանդակել է գաղտնալսումներին




Ամերիկյան Microsoft կորպորացիան սերտորեն համագործակցել է ԱՄՆ հատուկ ծառայությունների հետ, մասնավորապես Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ) լրտեսներին օգնել է շրջանցելու իր ծածկագրման համակարգերը: Այդ մասին ասվում է բրիտանական «Գարդիան» թերթի հրապարակման մեջ, որը հիմնված է ԿՀՎ եւ ԱԱԳ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենի նոր բացահայտումների վրա:

Թերթը տեղեկացնում է, որ Microsoft-ը նախքան արտադրանքների առեւտրային թողարկումը ԱԱԳ-ին մատչելի էր դարձնում ծածկագրման համակարգերը, հնարավորություն տալով հեշտությամբ կալանել օգտատերերի ամեն տեսակ հաղորդումները: Այդպես պատահեց, օրինակ, Outlook կայքէջի միջոցով կատարվող նամակագրության դեպքում, իսկ անցյալ տարի Skype համացանցային հեռախոսակապի տեխնոլոգիան հայտնեցին ԱՄՆ-ի հետախուզությանը, որպեսզի վերջինս հեշտությամբ տվյալներ հավաքի հեռախոսազրույցների վերաբերյալ:

«Գարդիանը» ընդգծում է, որ այս ամենը վկայում է գաղտնի ծառայությունների հետ ամերիկյան տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար ընկերությունների համագործակցության ծավալների մասին: Սնոուդենի բացահայտած փաստաթղթերը վերաբերում են այդ համագործակցության վերջին երեք տարիներին:

Microsoft ընկերությունում այս կապակցությամբ նշում են, որ ըստ օրենքի իրենք պարտավոր են ենթարկվել ուժային կառույցների պահանջներին:

Խոսքը 2007 թվականից ԱԱԳ-ի գործի դրած PRISM գաղտնի ծրագրի մասին է, որի նպատակն է ամբողջ աշխարհում մարդկանց վերաբերյալ տեղեկություններ հավաքել Microsoft, Yahoo!, Google, Facebook, Skype, YouTube, PalTalk, AOL եւ Apple ընկերությունների ռեսուրսների միջոցով:

Այս տարի Microsoft-ը գործակցել է նաեւ ՀԴԲ-ի հետ, որպեսզի դյուրացնի PRISM-ի միջոցով ԱԱԳ-ի մուտքը հնարավոր սերվերներում պահվող տեղեկությունների SkyDrive ծառայություն: «Գարդիանը» նշում է, որ ներկայումս ամբողջ աշխարհում այդ ծառայությունից օգտվում է մոտ 250 մլն մարդ:

**Պ. Ք.**



# Ըստ ՄԱԿ-ի, պարենային օգնություն է պետք 34 երկրների

## *2013-ին սպասվում է հացահատիկի լավ բերք*




**ՄԱԿ-ի Պարենային եւ գյուղատնտեսական կազմակերպության՝ FAO-ի տվյալներով, արտաքին պարենային օգնության կարիք են աշխարհի 34 երկրներ, այդ թվում 27-ը՝ Աֆրիկայում:**

**Կազմակերպության եռամսյակային վերջին զեկուցագրում քննության են առնվում նոր զարգացող երկրների պարենային անվտանգության վրա ազդող գործոնները եւ առանձնացվում են առավել անպաշտպան երկրները: Դրանց թվում են Սիրիան, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը, Կոնգոն, Սոմալին, Սուդանը, Հարավային Սուդանը, ԿԺԴՀ-ն ու այլն:**

**FAO-ի տվյալներով, պարենային անվտանգությունը բացակայում է Կենտրոնական եւ Արեւմտյան Աֆրիկայի երկրների մեծ մասում: Ինչ վերաբերում է Սիրիային, ՄԱԿ-ի մասնագետները նշում են, որ քաղաքացիական պատերազմի պայմաններում 2013-ին այնտեղ կտրուկ նվազել է ցորենի արտադրությունը, մոտ 4 մլն մարդ պարենի պակաս է զգում:**

**FAO-ն կանխատեսում է, որ մինչեւ 2013 թ. աշխարհի բնակչությունը ներկայիս 7 միլիարդից կհասնի 9 միլիարդի: Կազմակերպությունը նախազգուշացնում է, որ պարենավորման անհրաժեշտությունը կարող է հանգեցնել ջրի պաշարների սպառմանը եւ նոր անտառահատումների:**

**Միեւնույն ժամանակ փաստաթղթում նշվում է, որ 2013 թվականին հացահատիկի համաշխարհային արտադրության ընդհանուր ծավալը 2012-ի համեմատությամբ կարող է աճել 7 տոկոսով, ինչը թույլ կտա համալրել հացահատիկի պաշարները եւ 2013-2014 թթ. կայունացնել շուկան:**

**2013-ին ֆուրաժային հացահատիկի համաշխարհային արտադրությունը անցյալ տարվա համեմատությամբ կավելանա 9,2 տոկոսով եւ կկազմի 1275 մլն տոննա:**

**FAO-ի կանխատեսումների համաձայն, բրնձի համաշխարհային արտադրությունը կարող է աճել 1,9 տոկոսով, նշում է ՌԻԱ գործակալությունը:**

**Ցածր եկամուտ եւ պարենի պակաս ունեցող երկրներում 2013-2014 թթ. հացահատիկի ներմուծումը 2012-2013 թթ. համեմատությամբ կավելանա 5 տոկոսով: Ամենախոշոր ներմուծողները կլինեն Եգիպտոսը, Ինդոնեզիան եւ Նիգերիան:**

# Վատիկանը փոխում է քրեական օրենսդրությունը



**Վատիկանում այսուհետեւ մանկապղծությունը եւ որոշ այլ իրավախախտումներ պաշտոնապես կհամարվեն առանձին հանցագործություններ, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Ֆրանցիսկ պապի հաստատած նոր օրենքներում, բացի բուն մանկապղծությունից, առաջին անգամ նշվում են նաեւ այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են մանկական պոռնկությունը, մանկական պոռնկագրության ստեղծումն ու պահպանումը, որոշ այլ իրավախախտումներ: Այսուհետեւ Վատիկանում երեխաների դեմ ուղղված հանցանքների համար կարող են բանտարկվել մինչեւ 12 տարով:**

**Առաջին անգամ հանցագործություն է ճանաչվել նաեւ Վատիկանի ներքին տեղեկությունների հրապարակումը: Այն կարող է պատժվել 6 ամսից մինչեւ 8 տարվա բանտարկությամբ, ինչպես նաեւ 2000 եվրո տուգանքով:**

**Վատիկանի օրենսդրությունը միջազգային նորմերին է համապատասխանեցվել նաեւ պատերազմական հանցագործությունների, ցեղասպանության, փողերի լվացման եւ որոշ այլ հանցանքների հարցում, հաղորդում է «Վատիկանի ռադիոն»:**

**Նոր օրենքները հրապարակվել են որպես պապի անձնական նախաձեռնությունը, նշում է CNN հեռուստաալիքը: Կաթոլիկ հովվապետը Վատիկանի պետության ղեկավարն է եւ բացարձակ միապետը:**

**Երեխաների դեմ ուղղված ոտնձգությունները մինչեւ վերջերս Վատիկանում պատժվում էին «լավ սովորույթների» խախտման ընդհանուր հոդվածով: Նման անորոշ ձեւակերպման պատճառն այն էր, որ Վատիկանի օրենսդրության հիմքում ընկած էր Իտալիայի օրենքների 1889 թ. ժողովածուն:**

**Վատիկանի օրենսդրության գործողությունը տարածվում է այդ քաղաք-պետությունում ապրող եւ աշխատող մի քանի հարյուր մարդու վրա:**

**Պ. Ք.**


ՇԱՂԳԱՄԸ
ՏՈՏՈ ՀԵՔԻԱԹ
ՊԱՌԱ՜Վ...
ՏՈՒԶԻԿ...
ՄՈՒՐԿ
ԳԱԼԻ՛Ս ԵՄ...
ԿԱՆԳՆԻ՛Ր
ԵՍ ՉԷԻ... ՄՈՒԿՆ ԷՐ

# Դավիթ Սաֆարյանն Ունիվերսիադայի փոխչեմպիոն




Կազանում ընթացող համաշխարհային ուսանողական խաղերում Հայաստանին 3-րդ մեդալը պարգեւեց ազատոճային ըմբիշ Դավիթ Սաֆարյանը: Մինչեւ 66 կգ քաշային կարգում Դավիթը հաջող անցկացրեց նախնական փուլերի գոտեմարտերն ու մտավ եզրափակիչ: Նա հաջորդաբար պարտության մատնեց լեհ Արկադիուշ Սժելային, ուզբեկ Իխտիեր Նավրուզովին, Ղրղզստանի ներկայացուցիչ Ուլուկման Մամատովին եւ ուկրաինացի Սեմյոն Ռադուլովին:

Վճռորոշ գոտեմարտում Դավիթի մրցակիցը ռուսաստանցի Մագոմեդ Կուրբանալիեւն էր: Հայ ըմբիշը եզրափակիչում պարտվեց 1-3 հաշվով եւ բավարարվեց արծաթե մեդալով:

Մինչեւ 84 կգ քաշային կարգում Մուսա Մուրթազալիեւն առաջին գոտեմարտը ճապոնացի Մաոյա Ակագումայից շահելուց հետո հաջորդ մրցամարտում պարտվեց իրանցի Մոհամադհոսեյին Մոհամադիանին եւ դուրս մնաց հետագա պայքարից: Անհաջող հանդես եկավ նաեւ Գարիկ Բարսեղյանը, որը մինչեւ 55 կգ քաշային ըմբիշների մրցավեճում հենց առաջին գոտեմարտից թողեց ասպարեզը: Նրա մրցակիցը վրացի Օթարի Գոգավան էր:

Անհաջող հանդես եկան նաեւ Վոլոդյա Ֆրանգուլյանը (60 կգ) եւ Էդգար Ենոքյանը (96 կգ), որոնք եւս առաջին գոտեմարտերից հետո դուրս մնացին հետագա պայքարից. Ֆրանգուլյանը պարտվեց ամերիկացի Թիլեր Գրաֆին, իսկ Էդգարը զիջեց ադրբեջանցի Գաջի Շարիպովին:

# Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի տիտղոսի 10 հավակնորդները

ՈՒԵՖԱ-ն հրապարակել է 2012/13-ի մրցաշրջանի Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի տիտղոսի 10 հավակնորդների ցանկը: Օգոստոսի 6-ին նրանց թիվը կկրճատվի ու կհասցվի 3-ի: Իսկ օգոստոսի 29-ին Մոնակոյում հայտնի կդառնա Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի անունը: Լավագույնները կորոշվեն ՈՒԵՖԱ-ի անդամ բոլոր երկրների լրագրողներից կազմված ժյուրիի անդամների քվեարկության արդյունքում:

Մրցանակի 10 թեկնածուները ներկայացնում են եվրոպական 7 ակումբներ: Առավել շատ ներկայացուցիչներ ունի չեմպիոնների ներկայիս գավաթակիր Մյունխենի «Բավարիան»: Թիմի 4 ֆուտբոլիստներ՝ Արիեն Ռոբենը, Բաստիան Շվայնշտայգերը, Թոմաս Մյուլլերն ու Ֆրանկ Ռիբերին թեկնածուների թվում են: Մրցանակին հավակնում են նաեւ «Ոսկե գնդակի» քառակի դափնեկիր Լիոնել Մեսին («Բարսելոնա»), Գարեթ Բեյլը («Տոտենհեմ»), Քրիշտիանու Ռոնալդուն («Ռեալ»), Զլատան Իբրահիմովիչը (ՊՍԺ),




Ռոբերտ Լեւանդովսկին («Բորուսիա», Դորտմունդ) եւ Ռոբին վան Պերսին («Մանչեսթր Յունայթեդ»):

# Գյոզալյանը փորձաշրջան է անցնում «Կրակովիայում»

**Հայաստանի նախորդ առաջնության լավագույն ռմբարկու Նորայր Գյոզալյանը փորձաշրջանի է մեկնել լեհական «Կրակովիա», որը հանդես է գալիս բարձրագույն խմբում: Գյոզալյանն «Իմպուլսի» կազմում անցած առաջնությունում 22 գոլի հեղինակ էր դարձել: «Իմպուլսի» լուծարումից հետո նա իր մի քանի թիմակիցների հետ մարզվում էր «Բանանցում»:**

# «Շախտյորն» Ուկրաինայի հնգակի սուպերգավաթակիր

**Ֆուտբոլային նոր մրցաշրջանում Դոնեցկի «Շախտյորը» առաջին տիտղոսը նվաճեց: Միրչա Լուչեսկուի սաներն Ուկրաինայի Սուպերգավաթի համար մրցավեճում Օդեսայում 3-1 հաշվով պարտության մատնեցին տեղի «Չեռնոմորեցին»: Առաջին խաղակեսում 2 անգամ աչքի ընկավ «Շախտյորի» նորեկ Ֆրեդը, իսկ ընդմիջումից հետո Տեյշեյրան հաջող իրացրեց 11 մ հարվածը:**

**«Շախտյորը» 5-րդ անգամ դարձավ Ուկրաինայի սուպերգավաթակիր: Դա Ուկրաինայում թիմի նվաճած 22-րդ տիտղոսն էր եւ 12-րդը՝ վերջին 5 տարիների ընթացքում:**

# Մեղադրվում են պայմանավորված խաղերի կազմակերպման մեջ

**«Լացիոյի», «Ջենոայի» եւ «Լեչեի» 8 ֆուտբոլիստի՝ Ստեֆան Մաուրիին, Մարիո Կասսանոյին, Կառլո Ջերվասոնիին, Օմար Միլանետոյին, Ալեսանդրո Զամպերինիին, Մասիմիլիանո Բենասիին, Անտոնիո Ռոզատիին եւ Ստեֆանո Ֆերարիոյին Իտալիայի ֆուտբոլի ֆեդերացիան մեղադրում է պայմանավորված խաղերին մասնակցելու համար: Խոսքը 2011-ին կայացած «Լացիո»-«Ջենոա» եւ «Լեչե»-«Լացիո» հանդիպումների մասին է:**

**Եթե ֆուտբոլիստների մեղքն ապացուցվի, ապա նրանց երկարատեւ որակազրկում է սպառնում, իսկ ակումբներին կարող են պատժել միավորներ հանելով:**

# Դավիթ Վիյան կտեղափոխվի «Ատլետիկո»

**«Բարսելոնը» համաձայնեցրել է Մադրիդի «Ատլետիկոյի» հետ Դավիթ Վիյայի տեղափոխության հարցը: «Ատլետիկոն» «Բարսելոնին» Վիյայի դիմաց 5,1 մլն եվրո կվճարի: 31-ամյա ֆուտբոլիստը «Բարսելոն» էր տեղափոխվել 2010-ին «Վալենսիայից»: Նա մասնակցել է 119 խաղի, խփել է 48 գնդակ:**

# Ֆուտբոլիստին փոխանակեցին 50 գնդակի հետ

**Ներկայումս ֆուտբոլային ակումբները ֆուտբոլիստների տեղափոխության դիմաց խոշոր գումարներ են վճարում: Իսկ ահա Կոստա Ռիկայի առաջին խմբի առաջնության մասնակից «Պումայում» հանդես եկող պաշտպան Ռոջեր Ֆայյասը «Ունիվերսիդադ Դե Կոստա Ռիկա» է տեղափոխվել ընդամենը 50 գնդակի դիմաց: Հետաքրքրական է, որ Ֆայյասի նոր ակումբը բարձրագույն խմբի ուղեգիր է նվաճել հենց «Պումային» հաղթելու շնորհիվ (3-2):**

**«Ես համաձայնվեցի Ֆայյասի տեղափոխությանը, քանի որ մեզ համար մեծ պատիվ է մեր ֆուտբոլիստին բարձրագույն խմբում տեսնելը: Սակայն ես փոխհատուցում եմ պահանջել՝ 50 գնդակ», նշել է «Պումայի» նախագահ Ռիգոբերտո Չինչիյան:**

# Միլիարդատերը կգնի «Ֆուլհեմը»

**Ամերիկացի միլիարդատեր Շահիդ Խանը մտադիր է գնել անգլիական «Ֆուլհեմ» ֆուտբոլային ակումբը: Գործարքի արժեքը կարող է կազմել 200 մլն ֆունտ ստեռլինգ:**

**Ակումբի ներկայիս սեփականատեր Մոհամադ ալ Ֆայեդը 16 տարի ղեկավարում է թիմը: Նրա օրոք «Ֆուլհեմը» 4-րդ դիվիզիոնից հասել է Անգլիայի պրեմիեր լիգա:**

## ԵՎՐՈԳԱՎԱԹՆԵՐ

# «Փյունիկը» կմրցի «Ժալգիրիսի» հետ



**Եվրոպայի լիգայի որակավորման 2-րդ փուլում Հայաստանի գավաթակիր «Փյունիկը» կմրցի Վիլնյուսի «Ժալգիրիսի» հետ: Վերջին 2 խաղերի ընդհանուր արդյունքով առավելության է հասել Իռլանդիայի «Սենտ Պատրիկսի» նկատմամբ: Վիլնյուսում կայացած առաջին խաղում գրանցվել էր գոլառատ ոչ-ոքի՝ 2-2: Ընդ որում «Սենտ Պատրիկսը» հաշիվը հավասարեցրել էր խաղավարտից 3 րոպե առաջ:**

**Թվում էր, թե սեփական հարկի տակ իռլանդացիները կհաջողվի դրական արդյունքի հասնել եւ հաջորդ փուլի ուղեգիր նվաճել: Սակայն «Ժալգիրիսը» խաղը շահեց 2-1 հաշվով: Հյուրերն արդեն 52-րդ րոպեին առջեւում էին 2-0 հաշվով: Միայն խաղավարտից 5 րոպե առաջ դաշտի տերերին հաջողվեց 11 մ հարվածով կրճատել հաշիվը:**

**«Փյունիկը» «Ժալգիրիսի» հետ առաջին հանդիպումը կանցկացնի Վիլնյուսում, հուլիսի 18-ին: Պատասխան խաղը կկայանա մեկ շաբաթ անց «Հանրապետականում»:**

**Եվրոգավաթներում «Ժալգիրիսի» հետ հայկական ակումբները մրցել են միայն մեկ անգամ: 1999/2000-ի մրցաշրջանում չեմպիոնների լիգայի որակավորման 1-ին փուլում «Ժալգիրիսը» սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթել է Արարատի «Ցեմենտին»: «Հրազդան» մարզադաշտում կայացած պատասխան խաղում էլ լիտվացիները 3 անպատասխան գնդակ են խփել: Հետաքրքրական է, որ «Ցեմենտի» կազմում 2 հանդիպումներին էլ մասնակցել է «Փյունիկի» ներկայիս գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանը:**

**Հիշեցնենք, որ Գյումրիի «Շիրակը» Բելգրադի «Պարտիզանին» կհյուրընկալի հուլիսի 17-ին: Պատասխան հանդիպումը կկայանա մեկ շաբաթ անց Բելգրադում:**

# Զավեն Անդրեասյանն առաջատարներից մեկն է

**Ունիվերսիադայի շախմատի մրցաշարի 4-րդ տուրում Զավեն Անդրեասյանը հաղթելով Յաչեկ Թոմժակին, 3,5 միավորով 6 շախմատիստների հետ ստանձնեց առաջատարի դերը: Ռոբերտ Հովհաննիսյանը ոչ-ոքի ավարտեց պարտիան Վոյցեխ Մորանդայի հետ ու 3 միավորով ընթանում է 9-րդ տեղում:**

# Մովսիսյանի հերթական ոչ-ոքին

**Բենասկի շախմատի մրցաշարի 8-րդ տուրում Կարեն Մովսիսյանը հաշտություն կնքեց Կիրիլ Գեորգիեւի հետ: Հայ շախմատիստը 6 միավորով 21-րդ տեղում է: 7,5 միավորով աղյուսակը շարունակում է գլխավորել Վենեսուելայի ներկայացուցիչ Էդուարդո Իտուրիզագան, որը հերթական հաղթանակը տոնեց Նի Հուայի հետ մրցավեճում: 7-ական միավորով առաջատարին հետապնդում են Մաքսիմ Ռոդշտեյնն ու Ալեքսանդր Դելչեւը:**

# Աղվան Մկրտչյանը հեռացավ «Միկայից»

**«Միկայի» ավագ Աղվան Մկրտչյանը երկկողմ համաձայնությամբ խզել է պայմանագիրը «Միկայի» հետ: Պատճառն աշխատավարձի զգալի կրճատումն է, ինչը ակումբի հովանավոր Միքայել Բաղդասարովին պատկանող «Արմավիայի» սնանկացման հետեւանքն է: Գուցե հենց դրանով պետք է բացատրել Աղվանի անպատասխանատու խաղը «Ռուդարի» հետ մրցավեճում: Հենց նրա կոպիտ սխալի հետեւանքով «Ռուդարը» հավասարեցրեց հաշիվը ու հաջորդ փուլի ուղեգիր նվաճեց:**

**Աղվան Մկրտչյանը «Միկայում» հանդես էր գալիս 2009-ից: Մինչ այդ նա խաղացել է «Դվինում», «Էրեբունիում», «Արարատում» եւ «Փյունիկում»:**

# Հայրապետյանը հետապնդում է առաջատարին

**Բարսելոնում ընթացող շախմատի մրցաշարի 8-րդ տուրում Հովիկ Հայրապետյանը միավորը կիսեց Հիպոլիտո Ասիսի հետ պարտիայում: Հովիկը 5,5 միավորով 9-րդ տեղում է: Կարեն Գրիգորյանը 5 միավորով ընթանում է 12-րդ տեղում: 8-րդ տուրում նա պարտվեց Մաուրիցիո Ֆլորեսին: Հաջող խաղաց Մարկ Բասենցյանը, որը պարտության մատնեց Կառլոս Գոնսալեսին: Մարկը ունի 4 միավոր: 7 միավորով առաջատարը պերուացի Քրիստիան Կրուզն է, որը հաղթեց Ռոբերտո Ալոմային: 5 շախմատիստներ 6-ական միավորով հետապնդում են նրան:**

# Հայ ծանրորդները մեդալ չնվաճեցին

**Կազանում ընթացող Ունիվերսիադայում հայ ծանրորդներին այդպես էլ չհաջողվեց մեդալ նվաճել: Եթե Սմբատ Մարգարյանը (56 կգ) եւ Աղասի Աղասյանը (85 կգ) յուրաքանչյուր վարժությունում միայն մեկ մոտեցում հաջող կատարելով, համեստ արդյունքներ էին ցույց տվել, ապա Հայաստանի վերջին ներկայացուցիչ Վարդան Դավթյանը (94 կգ) պարզապես ձախողվեց: Պոկում վարժությունում նա հաջորդաբար բարձրացրեց 160 եւ 165 կգ-անոց ծանրաձողերը, իսկ ահա 170 կգ-ը բարձրացնել չկարողացավ: Նա այդ վարժությունում գրավեց 5-րդ տեղը: Իսկ ահա հրում վարժությունում Դավթյանը ձախողվեց: Չկարողանալով բարձրացնել նախնական պատվիրած 196 կգ-ը, նա հաջորդ 2 անհաջող փորձերի ժամանակ ցանկանում էր գլխավերեւում պահել 202 կգ-անոց ծանրաձողը: Վարդանը 0 ստացավ:**

**Քաշային այս կարգում մրցակցությունից դուրս էր ռուսաստանցի Ալեքսանդր Իվանովը, որն անթերի կատարեց բոլոր 6 մոտեցումներն էլ եւ երկամարտի 395 կգ (181+214) արդյունքով հռչակվեց չեմպիոն: Ղազախստանը ներկայացրած 2-րդ մրցանակակիր Ալեքսանդր Զայչիկովը հաղթողին զիջեց 20 կգ-ով: Բրոնզե մեդալը նվաճեց ամերիկացի Ջեյմս Ֆարիսը՝ 372 կգ (161+211):**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն առաջարկում է մեքենայի կայանատեղի վճարման ճկուն տարբերակ՝ SMS հաղորդագրությամբ

ՎիվաՍել-ՄՏՍ-ը ներկայացնում է նոր պրեմիում SMS ծառայություն՝ նախատեսված այն վարորդների համար, ովքեր ցանկանում են ավտոմեքենան կայանելու համար վճարել առավել դյուրին տարբերակով՝ անմիջապես բջջային հեռախոսով:

Այսպես, 1 ժամ մեքենան կայանելու համար անհրաժեշտ է SMS ուղարկել 1045 կարճ համարին (1 ժամով կայանման արժեքը՝ 100 դրամ է), իսկ շուրջօրյա կայանման համար՝ 5045 կարճ համարին (այս դեպքում արժեքը 500 դրամ է):

SMS հաղորդագրությամբ ավտոկայանման համար վճարելն առկա ամենաճկուն տարբերակներից մեկն է: Նախագիծն իրականացվում է «Փարքինգ սիթի սերվիս» ընկերության հետ համատեղ:

**Վաճառվում է** 4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը՝ պայմանագրային: Հեռ.՝ 093-505-807, (010) 222-730

ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Բանկի վարչական 2 մասնաշենքի շինարարության մրցույթ հետևյալ հասցեներով՝

1. քաղաք Երևան Էրեբունի համայնք Տիգրան Մեծի թիվ 74,

2. Արմավիրի մարզ քաղաք Մեծամոր 1-ին թաղամաս:

Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (010) 31-88-88 հեռախոսահամարով կամ այցելել Բանկի «Գնումների և մատակարարման» բաժին Բագրատունյաց փ. 16/2 հասցեով՝ ժամը 09:30-16:00-ը (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է մինչև ս.թ. հուլիսի 19-ը:

## Կորել է

Լաուրա Հրանտի Ավտանդիլյանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի մանկաբուժական ֆակուլտետի դիպլոմը՝ տրված 1990 թ.:

Համարել անվավեր:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացնում ենք, որ «Կամուրջ»ՈւՎԿՓԲԸ-ի կողմից առաջարկվող սպառողական վարկերը տրամադրվում են անհատական և խմբային երաշխավորությամբ, հետևյալ պայմաններով.

- ▼ խմբի անդամների քանակ՝ 3-15 անդամ,
- ▼ ժամկետ՝ 3-36ամիս,
- ▼ վարկի գումար՝50,000-2,500,000 ՀՀ դրամ,
- ▼ տարեկան տոկոսադրույք՝ 18%-24% (հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ),
- ▼ վարկի տրամադրման վճար՝ 1.5%-6%,
- ▼ սպասարկման վճար՝ 0%- 0.5%,
- ▼ տուժանք ՝ օրական 1 % (առավելագույնը 45 օրացուցային օր):

Տեղեկացնում ենք նաև, որ «Կամուրջ ՈւՎԿ» ՓԲԸ-ի 2013թ.1-ին եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կարող եք ծանոթանալ www.kamurj.am «Կամուրջ»ՈւՎԿՓԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքում:

*«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11*
***Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն***
*2013թ. Հունիսի 30*

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ | Նախորդ տարվա վերջի դրությամբ |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ եւ բանկային հաշիվներ | 401,587 | 217,646 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 103,354 | 306,313 |
| Հաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխատվություններ | 8,322,701 | 6,890,601 |
| Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 95,312 | 83,323 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 53,354 | - |
| Այլ ակտիվներ | 9,389 | 23,784 |
| Ընդամենը ակտիվներ | 8,985,697 | 7,521,667 |
| **Պարտավորություններ** | | |
| Ստացված վարկեր, փոխառություններ | 3,709,907 | 3,092,661 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ | 14,125 | 96,112 |
| Պահուստներ | 35,908 | 41,508 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | - | 136,673 |
| Այլ պարտավորություններ | 27,766 | 19,177 |
| Ընդամենը պարտավորություններ | 3,787,706 | 3,386,131 |
| **Կապիտալ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 4,500,000 | 2,000,000 |
| Լրացուցիչ կապիտալ | 193,044 | 850,404 |
| Գլխավոր պահուստ | 65,702 | 42,465 |
| Կուտակված շահույթ | 439,245 | 1,242,667 |
| Ընդամենը կապիտալ | 5,197,991 | 4,135,536 |
| Ընդամենը պարտավորություններ եւ կապիտալ | 8,985,697 | 7,521,667 |

***Տնօրեն՝ Գ. Վարդանյան*** ***Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան***

*«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11*
***Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն***
*2013թ. Հունիսի 30*

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| **1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից** | **(839,745)** | **(281,000)** |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը** | **395,748** | **225,594** |
| Ստացված տոկոսներ | 915,861 | 699,151 |
| Վճարված տոկոսներ | (107,054) | (54,893) |
| Ստացված տույժեր եւ տուգանքներ | 9,972 | 4,726 |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | (187,549) | (167,145) |
| Վճարված հարկեր | (235,482) | (256,245) |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից** | **(1,235,493)** | **(506,594)** |
| Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում) | (1,124,931) | (169,958) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից | (110,562) | (336,636) |
| **2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից** | **(19,649)** | **(13,943)** |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (19,649) | (13,943) |
| **3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից** | **1,044,183** | **438,611** |
| Ստացված վարկերի/փոխառությունների | 1,044,183 | 438,611 |
| Բաշխումներ | - | - |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | (848) | 13,026 |
| **Դրամական միջոցների զուտ հոսք** | **183,941** | **156,694** |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 217,646 | 247,236 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 401,587 | 403,930 |

***Տնօրեն՝ Գ. Վարդանյան*** ***Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան***

*«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11*
***Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն***
*2013թ. Հունիսի 30*

Հազար ՀՀ դրամ

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա նույն ժամանակաշրջան | Հաշվետու տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը | Նախորդ տարվա սկզբից մինչեւ նախորդ տարվա նույն ժ-շրջանը |
|---|---|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 523,516 | 402,330 | 1,053,254 | 843,272 |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | (75,618) | (62,622) | (144,794 | (124,002) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **447,898** | **339,708** | **908,460** | **719,270** |
| Արտարժութային գործարքներից զուտ շահույթ/(վնաս) | 38,876 | (69,320) | (23,899) | (87,357) |
| Այլ գործառնական եկամուտներ | 5,618 | 3,218 | 10,274 | 9,559 |
| Այլ գործառնական ծախսեր | (4,423) | (9,378) | (9,065) | (21,220) |
| **Զուտ կոմիսիոն եւ այլ եկամուտ** | **487,969** | **264,228** | **885,770** | **620,252** |
| Վարկերից եւ այլ փոխառություններից կորուստներ | (18,720) | (5,329) | (24,261) | (15,979) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (215,485) | (140,229) | (404,583) | (284,257) |
| **Շահույթ մինչեւ հարկումը** | **253,764** | **118,670** | **456,926** | **320,016** |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 47,041 | 42,544 | 50,461 | 83,175 |
| **Ժամանակաշրջանի Շահույթ** | **206,723** | **76,126** | **406,465** | **236,841** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | - | - |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո | - | - | - | - |
| **Համապարփակ ֆինանսական արդյունք, այդ թվում** | **206,723** | **76,126** | **406,465** | **236,841** |
| Մայր կազմակերպության բաժնեմաս | - | - | - | - |
| Չվերահսկվող բաժնեմաս | - | - | - | - |

***Տնօրեն՝ Գ. Վարդանյան*** ***Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան***

*"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11*
***Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն***
*2013թ. Հունիսի 30*

*Հազար ՀՀ դրամ*

| | Կանոնադրական կապիտալ | Լրացուցիչ կապիտալ | Գլխավոր պահուստ | Չբաշխված շահույթ/վնաս | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| **Նախորդ ժամանակաշրջան** | | | | | |
| Մնացորդը առ 2011թ. Դեկտեմբերի 31 | 500,000 | 1,474,982 | | 849,310 | 2,824,292 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 1,500,000 | | | | 1,500,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 1,500,000 | | | | 1,500,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 464,744 | 464,744 |
| Շահութաբաժիններ | | | | | |
| Զուտ շահույթ/վնաս | | | 42,465 | (42,465) | |
| Բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունք՝ առանց հետաձգված հարկի | | (624,578) | | | (624,578) |
| Այլ բաշխումներ | | | | (28,922) | (28,922) |
| Մնացորդը առ 2012թ. Դեկտեմբերի 31 | 2,000,000 | 850,404 | 42,465 | 1,242,667 | 4,135,536 |
| **Հաշվետու ժամանակաշրջան** | | | | | |
| Մնացորդը առ 2012թ. Դեկտեմբերի 31 | 2,000,000 | 850,404 | | 1,242,667 | 4,135,536 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 1,313,351 | | | | 1,313,351 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 1,313,351 | | | | 1,313,351 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 406,465 | 406,465 |
| Շահութաբաժիններ | | | | | |
| Զուտ շահույթ/վնաս | 1,186,649 | | 23,237 | (1,209,886) | |
| Բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունք՝ առանց հետաձգված հարկի | | (657,360) | | | (657,360) |
| Այլ բաշխումներ | | | | | |
| Մնացորդը առ 2013թ. Հունիսի 30 | 4,500,000 | 193,044 | 23,237 | 439,245 | 5,197,991 |

***Տնօրեն՝ Գ. Վարդանյան*** ***Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան***

*«Կամուրջ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11*
***Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն***
*2013թ. Հունիսի 30*

*Հազար ՀՀ դրամ*

| Նորմատիվներ | Փաստացի մեծությունը | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը | 4,500,000 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 5,156,650 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների միջեւ նվազագույն հարաբերակցությունը (Ն1 նորմատիվ) | 56.3% | 10.0% | խախտում առկա չէ |
| Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն3 նորմատիվ) | 0.5% | 25.0% | խախտում առկա չէ |

***Տնօրեն՝ Գ. Վարդանյան*** ***Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան***

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 12.7.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: